# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝** ԳԲՔԱ-ԼՕ-2021/08, 23.02.2021թ.

**Բողոք բերող անձ՝** «Կարինե Համբարձումյան» Ա/Ձ

**Պատվիրատու՝** Աբովյանի համայնքապետարան

**Գնման ընթացակարգի ծածկագիրը՝** «ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/06» գնանշման հարցում

**Գնման առարկան՝** չափագրման ծառայությունների ձեռքբերում

**Բողոքի պահանջը**՝ վերանայել մրցույթի գնահատման հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և հայտարարությունը պայմանագիր կնքելու մասին որոշումը:

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ**
**ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

# Ա/Հ ԿԱՐԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մարտունի,Գ. Սեվակի 9, էլ. 077-11-75-85

N -5--
22 փետրվարի 2021թ.

Գնումների հետ կապված բողոքներ
քննող անձ Լևոն Օհանյանին

Հարգելի պարոն Օհանյան

Հայտնում եմ, որ Ա/Հ Կարինե Համբարձումյանը մասնակցել է www. armeps.am համակարգի միջոցով անցկացված Արովյանի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Արովյան Բարեկամության հրապարակ 1 հասցեում, կողմից հրապարակված <<ԱԲՀ-ԳՀԾՁԲ-21/06>> ծածկագրով գնանշման գնման ընթացակարգին: Գնման ընդացակարգով գնման առարկա է հանդիսանում «Արովյան համայնքի» կարիքների համար՝ «չափագրման ծառայությունների» ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն):Իմ կողմից գնման ընդացակարգի Հավելված 2 ձևաթղթի ծառայության անվանում սյունյակում լրացվել է գնման ընդացակարգի տեխնիկական բնութագրում նշված՝ բնակելի տարածք՝ մինչև 50քմ- մինչև 100 միավոր

բնակելի տարածք՝ 50քմ և ավելի- մինչև 50 միավոր

ոչ բնակելի տարածք՝ մինչև 100քմ- մինչև 30 միավոր

ոչ բնակելի տարածք՝ 100-500քմ - մինչև 10 միավոր

ոչ բնակելի տարածք՝ 500-5000քմ - մինչև 5 միավոր անվանումները, իսկ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ սյունյակում լրացվել է առանձին միավորների գները տառերով և թվերով: Գնման ընդացակարգի գնահատող հանձնաժողովը իմ կողմից ուղղարկված հայտը գնահատել է անբավարար հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի 526-Ն որոման 32-րդ կետի 2 ենթակետը:

Սույն բողոքարկումով խնդրում եմ վերանայել մրցույթի գնահատման թիվ 2 արձանագրությունը քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի 526-Ն որոման 32-րդ կետի 2-րդ ենթակետով գրված է , որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում, որտեղ չեն բառը վերաբերվում է միայն

պահանջվում բառի և ներկայացվում բառին չեն բառը չի վերաբերվում, ուստի այն ներկայացմանը առգելող պահանջ առկա չի :

Սույն բողոքարկումով խնդրում եմ վերանայել մրցույթի գնահատման հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը և հայտարարությունը պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Կից ուղղարկվում է իմ կողմից ներկայացված գնման ընդացակարգի Հավելված 2 ձևաթղթի լուսապատճեն , բողոքարկման վճարման անդորրագրի լուսապատճեն, իմ անձնագրի լուսապատճեն, այլ փաստաթղթեր:

Առդիր 7 էջ:

Ա/Հ Կարինե Համբարձումյան